Reproductive Health Initiative for Youth in the South Caucasus

RHIYC

This Programme is co-funded by the European Union

United Nations Population Fund

# ԻՆՉՊԵՍ ԽՈՒՍԱՓԵԼ ԱՆՑԱՆԿԱԼԻ ՀՂԻՈՒԹՅՈՒՆԻՑ



# ՆԵՐԱՐԳԱՆԴԱՅԻՆ ՊԱՐՈՒՅՐ

ԼԻՆԵ՛ՆՔ ԻՐԱԶԵԿ, ԱՊՐԵ՛ՆՔ ԱՌՈՂՋ

IPPF International Planned Parenthood Federation

«ՀԱՆՈՒՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ
IPPF-ի ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԱՆԴԱՄ

## *Ինչ է ներարգանդային պարույրը*

Ներարգանդային պարույրը (ՆՊ) բեղմնականխման դարձունակ, ապահով և արդյունավետ միջոց է: Այն իրենից ներկայացնում է փոքրիկ և ճկուն հարմարանք, որը պատրաստված է մետաղից և/կամ պլաստմասսայից, որը տեղադրվում է Ձեր արգանդում համապատասխան բժշկի կամ բուժքրոջ կողմից: ՆՊ-ն կարող է լինել իներտ կամ անջատել պղինձ կամ հորմոն:

ՆՊ-ն ունի կից թելեր, որոնք վզիկի վրայով կախվում են ներքև՝ հեշտոցի մեջ: Կինը կարող է հավաստիանալ, որ ՆՊ-ն գտնվում է իր տեղում՝ հեշտոցում զգալով թելի առկայությունը: Բժիշկն այդ թելն օգտագործում է ՆՊ-ն հանելու համար:



## *Ինչպես է գործում ՆՊ-ն*

Ցանկացած ներարգանդային պարույր կանխում է հղիությունը գործողությունների հետևյալ մեխանիզմների համադրության շնորհիվ.

- Դեպի կանացի վերին սեռական օրգանների տրակտը սպերմատոզոիդների տեղափոխության արգելակում:
- Ձվաբջջիջների տեղաշարժման արգելակում:
- Սպերմատոզոիդների և ձվաբջջի հանդիպման խափանման շնորհիվ բեղմնավորման կանխում:

## *Արդյունավետությունը*

ՆՊ-ն պտղաբերության վերահսկման ամենաարդյունավետ դարձունակ մեթոդներից է: «ParaGard» կամ «Mirena» ՆՊ-ներ օգտագործող 100 կանանցից ընդամենը մեկը կարող է հղիանալ օգտագործման առաջին տարվա ընթացքում: Ճիշտ և շարունակական օգտագործման դեպքում հղիանալու հավանականությունն է՛լ ավելի է նվազում:



## *Առավելությունները*

ՆՊ-ն ծնելիության վերահսկման դարձունակ ձևերից ամենատարածվածն է աշխարհում: Աշխարհում ավելի քան 85 միլիոն կին օգտագործում է այդ մեթոդը:

ՆՊ-ն բեղմնականխման ամենից գաղտնի մեթոդն է. ոչ ոք չի կարող իմանալ, որ Դուք օգտագործում եք այն: Չկա նրա արտաքին տեսքի հետ կապված որևէ երևացող բան, որն օգտագործողների մոտ անհարմարություն կարող է առաջացնել: Այս մեթոդի կիրառման դեպքում հղիությունից պաշտպանվելու նպատակով սեռական ակտից առաջ որևէ գործողություն կատարելու անհրաժեշտություն չկա: Որոշ կանայք ասում են, որ իրենք իրենց ավելի անկաշկանդ են զգում, քանի որ հղիանալու մասին մտահոգվելու կարիք չկա: Հղիանալու ունակությունը շատ արագ է վերադառնում ՆՊ-ի օգտագործումը դադարեցնելուց հետո: ՆՊ-ն նաև ամենից մատչելի երկարաժամկետ բեղմնականխման դարձունակ մեթոդն է:

## *Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններից պաշտպանությունը*

Շատ կարևոր է հիշել, որ ՆՊ-ն չի պաշտպանում սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններից: Վարակի ռիսկը նվազեցնելու համար ՆՊ-ի հետ մեկտեղ օգտագործե՛ք լատեքսե կամ կանացի պահպանակ:

## *Ով կարող է ՆՊ օգտագործել*

Առողջ կանանցից շատերը, ներառյալ 18 տարեկանից բարձր այն երիտասարդ կանայք, ովքեր ծննդաբերել են, կարող են ՆՊ օգտագործել, եթե չկան այնպիսի իրավիճակներ և ռիսկեր, որոնք կարող են ավելացնել ՆՊ օգտագործելու դեպքում լուրջ բարդությունների ի հայտ գալու հավանականությունը:

*Հիշե՛ք.*

- Ոչ ապահով սեռական կյանք վարող երիտասարդ կանայք չպետք է օգտագործեն ՆՊ, որովհետև դա բարձրացնում է սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների ռիսկը և լուրջ բարդությունների առաջացման հավանականությունը, ներառյալ չբերությունը:
- Դեռահասները հնարավոր է, որ չկարողանան ՆՊ օգտագործել, քանի որ նրանց արգանդը շատ փոքր է:

Դուք պետք է այցելեք բժշկին՝ պարզելու համար՝ արդյոք կարող եք ՆՊ օգտագործել: Բժիշկը կզննի Ձեզ՝ հավաստիանալու համար, որ արգանդի վզիկը, հեշտոցը և ներքին օրգանները նորմալ վիճակում են և վարակված չեն: Հնարավոր է՝ Դուք թեստ հանձնեք՝ ստուգելու սեռական ճանապարհով փոխանցվող այնպիսի հիվանդությունների առկայությունը, ինչպիսիք են գոնոռեան, խլամիդոզը, հեշտոցի վարակները, արգանդի վզիկի նախաքաղցկեղային էրոզիաները կամ որևէ այլ բան, որը բուժման կարիք ունի:

*Հակացուցումներ*

Դուք չպետք է ՆՊ օգտագործեք, եթե.

- Վերջին երեք ամիսների ընթացքում ծննդաբերության կամ արհեստական վիժման արդյունքում փոքր կոնքի շրջանի հիվանդություն եք ստացել:
- Ունեք կամ հնարավոր է ունեք սեռական ճանապարհով փոխանցված հիվանդություն կամ սեռական օրգանների այլ հիվանդություններ:
- Կարծում եք, որ հնարավոր է՝ հղի եք:
- Նկատել եք անբացատրելի արյունահոսություն հեշտոցից:
- Ունեք սեռական օրգանների փուբերկուլյոզ:
- Պղնձից ալերգիա ունեք կամ հնարավոր է, որ ունեք:
- Ունեք լյարդի լուրջ հիվանդություն:
- Կրծքի կամ արգանդի ուռուցք ունեք կամ հավանական է, որ ունեք:



*Հնարավոր կողմնակի ազդեցությունները*

Հնարավոր կողմնակի ազդեցությունները, որոնք սովորաբար ի հայտ են գալիս առաջին մի քանի շաբաթների կամ ամիսների ընթացքում, դրսևորվում են դաշտանի առատության փոփոխություններով, ցիկլերի միջև տեղ-տեղ փոքրիկ արյունահոսություններով, մենստրուալ սպազմերով կամ մեջքի ցավերով: Կանայք սովորաբար ՆՊ-ին արագ են հարմարվում: Այնուամենայնիվ, առաջին ամիսների ընթացքում ուժեղ արյունահոսությունը և ձգվածության զգացումը կարող են հանգեցնել նրան, որ շատ կանայք փոխեն իրենց մտադրությունը և հեռացնեն ՆՊ-ն: Սովորական ցավազրկող դեղամիջոցը սովորաբար վերացնում է ձգվածության և անհարմարության զգացումը: Եթե արյունահոսությունը և ցավն ուժեղ են, և մեղմանալու միտումներ չեն նկատվում, դիմե՛ք բժշկի:

*Հնարավոր բարդություններ և հետևանքներ*

ՆՊ-ի օգտագործումից բխող լուրջ խնդիրներ հազվադեպ են ի հայտ գալիս: Շատ հազվադեպ ՆՊ-ն տեղադրելիս այն կարող է վնասել արգանդի պատը: Սովորաբար պերֆորացիան հայտնաբերվում և շտկվում է անմիջապես: Հակառակ դեպքում ՆՊ-ն կարող է շարժվել դեպի կոնքային մյուս հատվածը և վնասել ներքին օրգանները: Երբեմն ՆՊ-ն հանելու համար վիրահատական միջամտություն է պահանջվում:

ՆՊ-ի հետ կապված սեռական օրգանների հիվանդությունների պատճառը սովորաբար տեղադրման ընթացքում արգանդ ներթափանցող բակտերիաներն են: Վարակը հիմնականում ի հայտ է գալիս տեղադրումից հետո՝ երեք շաբաթվա ընթացքում: Այն սովորաբար դրսևորվում է, եթե կնոջ մոտ արդեն իսկ առկա են սեռական ճանապարհով փոխանցվող այնպիսի հիվանդություններ, ինչպիսիք են խլամիդոզը կամ գոնոռեան: Սեռական օրգաններում վարակը չբուժելը կարող է հանգեցնել չբերության:

***Անմիջապես հայտնե՛ք Ձեր բժշկին, եթե.***

- Նկատել եք, որ ՆՊ-ի թելը երկարել կամ կարճացել է:
- Չեք կարողանում շոշափել թելը:
- Շոշափելիս զգում եք ՆՊ-ի պինդ պլաստիկ ծայրը վզիկի մոտ:
- Ենթադրում եք, որ հղի եք:
- Դաշտանը շատ ավելի առատ է կամ ավելի երկար է տևում, քան սովորաբար:
- Որովայնի շրջանում ուժեղ ձգվածության, ցավի զգացում և հիվանդագին երևույթների առկայություն:
- Սեռական հարաբերությունը ցավոտ է կամ արյունահոսության է հանգեցնում:
- Անբացատրելի տենդ և/կամ դողէրոցք:
- Հարբուխային ախտանշաններ. մկանային ցավ, ընդհանուր թուլություն:
- Անսովոր արտադրություն հեշտոցից:
- Դաշտանի բացակայություն, ուշացում կամ սովորականից սակավ արյունային արտադրություն դաշտանի ժամանակ:
- Անբացատրելի արյունահոսություն հեշտոցից:

***Հղիություն***

ՆՊ օգտագործող կանանց մոտ հղիությունն ի հայտ է գալիս այն ժամանակ, եթե նրանց ՆՊ-ն տեղաշարժվել կամ դուրս է եկել, և նրանք այդ մասին չգիտեն: Քիչ հավանական է, որ կինը հղիանա, երբ ՆՊ-ն իր տեղում է, սակայն եթե նման բան իսկապես պատահի, ապա հնարավորության դեպքում անմիջապես հեռացրե՛ք այն: Այն կանայք, որոնք նախընտրում են մինչև հղիության ավարտը չհանել ՆՊ-ն, պետք է ողջ հղիության ընթացքում գտնվեն խիստ բժշկական վերահսկողության տակ:

Եթե Դուք հղի եք և ՆՊ-ն տեղադրված եք թողնում, բարձրանում է հետևյալ ռիսկերի հավանականությունը.

- արտարգանդային հղիություն,
- կոնքի շրջանի վտանգավոր հիվանդություն,
- վիժում,
- վաղաժամկետ ցավեր և ծննդաբերություն:

Ձեր բժիշկը կասի Ձեզ, թե ինչ տեսակի ՆՊ է տեղադրվել, և երբ պետք է այն փոխարինվի: Գրի՛ առեք այդ տեղեկատվությունը և պահե՛ք ապահով տեղում: Հակառակ դեպքում այն բժիշկները, որոնց կհանդիպեք հետագայում, չեն կարողանա ասել, թե ինչ տեսակի ՆՊ է Ձեզ մոտ տեղադրված, և երբ է այն պետք փոխարինել նորով:

***ՆՊ-ի տեղաշարժվելը***

ՆՊ-ն հազվադեպ կարող է մասամբ կամ ամբողջովին արգանդից դուրս սահել: Սա առավել բնորոշ է երիտասարդ կանանց կամ այն կանանց, որոնք երբեք չեն ծննդաբերել: Եթե դա պատահում է, կինը կարող է հղիանալ: Եթե ՆՊ-ն մասամբ է տեղից դուրս եկել, այն պետք է հեռացնել:

Դաշտանային ցիկլերի միջև ընկած ժամանակահատվածում փորձե՛ք շոշափել ՆՊ-ի թելերի ծայրերը: Հատկապես կարևոր է առաջին մի քանի ամսվա ընթացքում ստուգել մի քանի օրը մեկ: Տեղաշարժումը ամենից շատ հավանական է դաշտանի ընթացքում: Ստուգե՛ք Ձեր միջադիրներն ու տամպոնները պարզելու համար՝ ՆՊ-ն դուրս է եկել, թե ոչ: Եթե այո, պետք է խոսեք Ձեր բժշկի հետ, իսկ մինչ այդ օգտագործե՛ք պտղաբերության վերահսկման մեկ այլ մեթոդ, ինչպիսիք են պահպանակները:

***Հեռացումը***

ՆՊ-ի հեռացումը կամ փոխարինումը նորով սովորաբար հեշտ է: Բժիշկը զգուշությամբ քաշում է թելը որևէ որոշակի անկյունից, ՆՊ-ի «ձեռքերը» ծալվում են վերև, և ՆՊ-ն սահում է վզիկի բացվածքով: ՆՊ-ի փոխարինումը նորով սովորաբար կարելի է անել անմիջապես նախորդը հեռացնելուց հետո: Կանայք չպետք է փորձեն ՆՊ-ները հեռացնել ինքնուրույն կամ խնդրել նրանց, ովքեր մասնագետ չեն: Դա կարող է լուրջ վնաս պատճառել:

Հազվադեպ ՆՊ-ն կարող է կպչել արգանդին և հեշտությամբ դուրս չգալ: Նման դեպքերում կարող է անհրաժեշտություն ծագել, որպեսզի արգանդի վզիկը լայնացվի, և վիրահատական պինցետի միջոցով հանվի ՆՊ-ն: Այսպիսի հեռացումների համար կիրառվում է տեղային անզգայացում: Շատ հազվադեպ անհրաժեշտ է լինում կատարել վիրահատական միջամտություն: ՆՊ-ի հեռացման նպատակով կտրվածք կատարելու անհրաժեշտության դեպքում կինը պետք է գտնվի հիվանդանոցային պայմաններում:

## Ինչպես ստանալ օգնություն և տեղեկատվություն

Ձեզ անհրաժեշտ է ստանալ համապարփակ տեղեկատվություն՝ ինչպես խուսափել անցանկալի հղիությունից օգտագործելով ներարգանդային պարույր: Ուզում եք տեղեկատվություն ստանալ բեղմնականխման այլ մեթոդների վերաբերյա՞լ: Կամ կարծում եք, որ Ձեր կողմից կիրառված մեթոդը չի գործել, և հնարավոր է՝ հղի եք ու աջակցության կարի՞ք ունեք:

Դիմե՛ք փորձառու բժիշկ-մասնագետի կամ Երևանում գործող «Հանուն ընտանիքի և առողջության» համահայկական ասոցիացիայի երիտասարդական կենտրոնի վերապատրաստված խորհրդատուներին և ուսուցանողներին: Նրանք կարող են տրամադրել տեղեկատվություն, խորհրդատվություն և աջակցություն: Հանդիպում նշանակելու համար զանգահարե՛ք՝ **(374 10) 52-61-87, 65-36-65** կամ այցելե՛ք.

Երևան, Վարդանանց փ. 14/1
Էլ. փոստ՝ armfha@netsys.am

Հարավային Կովկասում Երիտասարդության Վերարտադրողական Առողջության Նախաձեռնությանը մանրամասն ծանոթանալու համար դիմե՛ք մեր կայքին՝ www.4uth.am: